

### Հ. Բ. Բ. Մ Ի Ո Ւ Թ Ե Ա Ն

## ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ԿՐԹԱԹՈՇԱԿԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Հ. Բ. Բ. Միութեան Կեդր. Յանձնախումբը, 1962-13 զգրոցական տարեշրջանի համար, համալսարանական ուսմանը յատուկ թոշակներու բաշխումին մասին կը ծանուցանէ հետև. տալը՝ շահագրգռողներուն ի գիտութիւն:

1. — Միութիւնը ներկայիս ունի 110 թոշակներկայ սաներ, որոնցմէ 20 հոգի այս տարի իրենց ընթացքը կ'աւարտեն: Իրենց ուսումը զեւ պիտի շարունակեն ուրեմն 80 հոգի, որոնք կրթաթոշակ պիտի ստանան յառաջիկա շրջանին ևս, թէ՛ յաղուգութեամբ անցուցած են իրենց տարեկերթի քննութիւնները:

2. — Իբրև նոր թեկնածու այս տարի պիտի ընդունուին միայն 20 հոգի, հետեւեալ պայմաններով.

ա) Կրթաթոշակ պիտի տրուի նիւթական միջոցներէ զուրկ և օժտուած երիտասարդներու, որոնք համալսարան պիտի յաճախեն Եւրոպայի կամ Մերձաւոր Արեւելքի զանազան երկիրներու մէջ:

բ) Նախընտրութիւն պիտի տրուի այն երիտասարդներուն, որոնք իրենց համալսարանական ուսումը յառաջացուցած են արգէն և զայն լրացնելու համար անհրաժեշտ աշակցութեան մը պէտք ունին:

գ) Հաւասար արժանիք ունեցող թեկնածուներու մէջէն, պիտի ընտրուին անոնք որ բարեբաղոյն ուսմանը կեդրոններու մօտ կը բնակին և նիւթական մեծ գոտուգութեանց չեն կարօտի իրենց դասընթացքին հետեւելու համար:

դ) Թեկնածուները պէտք է հայերէն գիտնան և իրենց երկրորդական ուսման աւարտական դասարանին մէջ լաւ նիշեր ստացած ըլլան:

3. — Մասնաւոր յատկացումներ պիտի կատարուին 5 թեկնածուներու, որոնք արգէն ապացոյցը տուած են թէ մտաւորական կամ գեղարուեստական ճիւղի մը մէջ բացատրիկ ընդունակութիւն ունին և կ'ուզեն իրենց մասնագիտութիւնը աւելի խորացնել կամ կատարելագործել:

4. — Որոշ հիմնադրամէ մը, Հ. Բ. Բ. Միութեան Ամերիկայի Կեդր. Յանձնաժողովին կողմէ փոխադրութեան ձևով, կրթաթոշակ պիտի տրուի Ամերիկա ծնած այն հայ ուսանողներուն՝ որոնք այս երկրին մէջ համալսարան մը պիտի յաճախեն:

5. — Աւրիշ մասնաւոր հիմնադրամէ մը կրնան օգտուիլ ամերիկայի երիտասարդներ՝ որոնք արտասահմանի հայ վարժարանի մը մէջ կը փափաքին ազգային ուսում ստանալ:

6. — Թոշակները մէկ տարուան շրջանի համար են և կը վերանորոգուին՝ երբ սան մը իր վերջին քննութեանց արգիւնքը մեղի ուղարկելով իր ուսումը շարունակելու բազմաւեցը յայտնէ:

7. — Որեւէ համալսարան ընդունուելու համար երկրորդական վարժարանի մը վկայականը ի ձեռին չունենցող թեկնածուներու դիմումները անհետեւեք կը մնան:

8. — Թեկնածուները հարկ է իրենց դիմումը կատարեն մինչև Մայիս 20, ստորև նշանակուած հասցէին: Ապա անոնց պիտի զրկուին հարցարաններ, որոնց տրուած պատասխաններուն և զանոնք հաստատող փաստաթուղթերուն հիման վրայ Միութեան կրթական Յանձնախումբը պիտի կատարէ թոշակներկայ սաներու ընտրութիւնը Յուլիոսի վերջը:

Այս յայտարարութիւնը միաժամանակ հրատարակութեան կը տրուի Ամերիկայի և արտասահմանի հայ թերթերուն մէջ:

Նիւ Եոք, 20 Մարտ 1962  
ԴԻՒԱՆ ԿԵՂՐ. ՎԱՐՁ. ԺՈՂՈՎԻ  
Mr. K. Guiragossian, Executive Director  
Armenian General Benevolent Union  
250 Fifth Avenue, New York 1, N. Y., U. S. A.